ԵՂԻՇԵՆ ԵՎ ՎԿԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՀ ԴԱԱ ակադեմիկոս Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Քրիստոնյա ժողովուրդների հին և միջին դարերի գրականության մեջ ծանրակշիռ տեղ ունեն սրբախոսական ժանրերի (վկայաբանություն և վարքագրություն) ստեղծագործությունները, որոնք ամենից առաջ կոչված էին վեհացնելու նոր կրոնը, վարդապետելու, ժողովրդի մեջ տարածելու նրա բարոյաբանական գաղափարները, քրիստոնեական հումանիզմի հունով ուղղելու ժողովրդի բարոյական դաստիարակությունը։ Ընդ որում առանձնապես բացառիկ կարևորություն է ունեցել այս վերջին հանգամանքը քաղաքական ծանր կացության մեջ գտնվող, օտարի բիրտ տիրապետությանը ենթակա, հոգևոր կյանքով երկփեղկված հայ ժողովրդի բարքերի մաքրման, ամրողջությամբ վերցրած՝ հայ հասարակության բարոյական բարձր նկարագիրը կերտելու տեսակետից։ Քրիստոնեական կրոնը իր առաջադեմ գաղափարներով, բարու և ճշմարտի աներեր հավատամքով վիթխարի դեր է կատարել հայ ժողովրդի հոգևոր աշխարհի աղնվացման ու հզորացման, նրա ազգային ուրույն գիմապատկերի պահպանման առումով։ Այս գործում դպրության այլ ժանրերի (ճառ, քարոզ, ջատագովություն, մեկնություն և այլն) ստեղծագործությունների շարքում առանձնապես զգալի է եղել հայ սրբախոսական ժանրերի քերթվածների բերած նպաստը։

Միաժամանակ հարկ է նշել, որ այդ ժանրերի երկերում, բացի ընդհանուր քրիստոնեական գաղափարներից, յուրատիպ արտացոլում են գտել նաև իրականության, հայ ազգային կյանքի մի շարք էական կողմեր։ Միանգամայն անտարակույս է այդ ժանրերի ստեղծագործությունների արժեքը պատմագիտական-աղբյուրագիտական առումով, բայց դրա հետ մեկտեղ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում հայ հոգևոր մշակույթի ընդհանուր վերելքի և հատկապես ազգային գեղարվեստական զարգացման օրինաչափությունները համակողմանի բնութագրելու տեսակետից։ Հայ իրականության մեջ այդ ժանրերի սկզբնավորումը կապված է ոսկեդարի նշանավոր քերթողների գրական ժառանգության հետ։ Ինչ վերաբերում է Եղիշեին, ապա պիտի անվարան ասենք, որ ըստ էության նրա ստեղծագործությամբ է վերջնականապես ձևավորվել ազգային ինքնուրույն վկայաբանության ժանրը հայ հին գրականության մեջ՝ իր որոշակի կանոններով ու ժանրային բնորոշ յուրահատկություններով։

Անդրադառնալով Վարդանանց պատերազմի բնույթի հարցին, Մ. Աբեղյանը միանգամայն իրավացի այն հետևությանն է հանգել, որ այդ պատերազմի ժամանակ «առաջ է գալիս կրոնական գաղափարախոսության տակ մասսաների միացում, պարսից տերության դեմ մասսայական կռիվ, որ սխալ կերպով կոչել են «կրոնական պատերազմ»։ Դա զուտ կրոնական չէ, այլ մի եկեղեցաքաղաքական զինյալ պայքար պարսիկների դեմ։ Եղիշեն շատ ճիշտ կերպով բնորոշել է այդ՝ անվանելով «Հայոց պատերազմ»[1]։ Աբեղ-

---

1 Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 332։ (Ընդգծումները մերն են— Վ. Ն.)։ Գիտնականն այստեղ, անկասկած, նկատի է ունեցել երկի ընծայականի՝ Դավիթ Մամիկոնյան երեցին Եղիշեի հասցեագրած խոսքերը. «Զքանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի,

յանն այնուհետև ընդգծում է, որ «այդ արդեն գաղափարական պայքար չէր քարոզչությամբ ու գրականությամբ ընդդեմ պարսիկների, այլ հին ռազմական դիմադրության զարթոնքն էր մասամբ ի հետևանք Սահակի ու Մաշտոցի կուլտուրական պայքարի»[2]:

Փաստերը հաստատում են, որ քաղաքական ու կրոնական ուժգին առճակատումների սրման հետևանքով V դարի կեսերին պարսից տիրակալության դեմ բռնկված ահեղ կռվում մի ընդհանուր միասնական գաղափարի մեջ բնականորեն միավորվում, միաձուլվում են «կրոն», «հավատ» և «հայրենիք» հասկացությունները: Եղիշեի երկում, իրոք, «Հայոց աշխարհ» և «քրիստոնեական կրոն» գաղափարները միմյանց հետ այնպես են բաղդիսված, որ անհնար է դրանք անջատել միմյանցից կամ դրանցից մեկի գոյությունը պատկերացնել անկախ մյուսից: Հակառակ պարագայում միշտ վտանգ կա պատմական եղելությունների մեկնաբանության մեջ ուղիղ ճանապարհից շեղվելու: Միանգամայն հասկանալի է, որ այս հանգամանքը թելադրում է V դարի ազատագրական պատերազմի եղելությունները մեկնաբանելիս խուսափել ավանդական հայեցակետը նույնությամբ կրկնելուց կամ դոգմատիկ դատողություններից և ավելի շրջահայաց ու սթափ մոտեցում հանդես բերել պատմական երևույթները գնահատելիս:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում մի փոքր շեղում կատարել և ասել հետևյալը: Ցափազանց կարևոր է, որ որքան էլ Եղիշեն միանգամայն հիմնավորված կերպով ընդգծում է այդ պատերազմում կրոնական գործոնի դերը, այնուամենայնիվ նա կրոնի հարցը չի ֆետիշացնում, չի ընկալում որպես մի ինքնակա հարց, ինչպես կոնկրետ փաստերով ցույց ենք տվել մեր «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը» մենագրության մեջ: Եղիշեն, օրինակ, վկայում է, որ Արշակունյաց հարստության վերացումից հետո «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որու և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից...» (Եղիշե, էջ 6):

Բացի այն, որ Եղիշեն միանգամայն ճիշտ է բնորոշում Հայաստանի հարկատու-կիսանկախ վիճակը, նրա այս վկայությունից դժվար չէ կռահել, որ ոսկեդարի նշանավոր հեղինակը, որքան էլ տոգորված լինի կրոնական մտածողությամբ (միանգամայն բնական հանգամանք իր ժամանակի համար), ինչպես երևում է վերոհիշյալ մեջբերումի ընդգծված մասից, ժամանակին հասկացել է, որ կրոնական հարցը ինքնին, քաղաքական հարցից անկախ, գոյություն չունի: Հեղինակի խոսքերից հետևում է, որ քանի դեռ Հայոց աշխարհը պահպանում էր իր ներքին անկախությունը (դեռևս հայ նախարարների ձեռքին էր գտնվում զորական ուժը), ուրեմն և քաղաքական, եթե ոչ լրիվ, գոնե կիսանկախ ազատություն ունեին հայերը, երկրում ազատորեն պաշտվում էր քրիստոնեական կրոնը, կամ պատմիչի խոսքերով ասած՝ «աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին»: Այստեղից էլ բխում է տրամաբանական եզրակացությունը՝ եթե հայերի ձեռքին չլիներ զորական ուժը և եթե նրանք ամբողջությամբ կորցնեին իրենց ներքին ինքնավարությունը ևս, ապա կզրկվեին քրիստոնեական կրոնը ազատորեն պաշտելու հնարավորությունից: Ասել է

ո՛վ քաջ. վասն Հայոց պատերազմ՝ն հրամայեցեր, յորում բազումք առաքինեցան քան զսակաւս»: Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան. Երևան, 1957, էջ 3: Այսուհետև՝ Եղիշե: Եղիշեի երկից մեջբերումների էջերը նշում ենք տեքստում:

2 Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 322:

թե՝ Եղիշեն կրոնի հարցը չի դիտել որպես ինքնակա հարց, այլ այն կախման մեջ է դրել քաղաքականից։

Եղիշեի երկից մատնանշենք նաև հայ նախարարների կեղծ ուրացության բազմիցս ծեծված փաստը (Եղիշե, էջ 49—50), որից պարզ երևում է, որ նախարարները ժամանակ շահելու և երկիրը ապստամբության նախապատրաստելու համար, նույնիսկ առանց երկար տատանվելու, համաձայնվում են առերես կատարել Հազկերտի պահանջը։ Երկրորդական հանգամանք է, թե այդ ուրացությունը կե՞ղծ էր, թե անկեղծ, որովհետև այն առհասարակ աններելի հանցանք էր քրիստոնյայի համար։ Ավելորդ չէ նաև վերհիշել այս մասին Ավարայրի Ճակատամարտի նախօրյակին Վարդանի արտասանած ճառի հետևյալ խոսքերը. «Մանաւանդ զի անմոռաց է ինձ, ուշելով զիմ և զոմանց ի ձէնջ, ի ժամանակին՝ զի զանօրէն իշխանն խաբեցաւ պատրեցաւ իրրև զմանուկ մի տղայ անսիտան, իբրև այն եթէ ի վերին երեսս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, ո՛րպէս անքակ կացեալ եմք ի նմանէ» (Եղիշե, էջ 102)[3]։

Այս հարկադրյալ, բայց անհրաժեշտ շեղումից հետո վերադառնանք մեզ զբաղեցնող գլխավոր հարցին, որի առթիվ ավելորդ չենք համարում վերհիշել նշանավոր բանասեր Միքայել Փորթուգալի խոսքերը. «Մինչ ժողովուրդը դարուց ի դարս Վարդանա անվամբը փառավորեց աշխարհիկ զինվորս և զորապետս՝ որք սպարապետին մարտակից կամ վկայակից եղան, «Ղևոնդյան» կոչեց այն սրբակրոն, արի ուխտավորներն՝ որք իրենց արյամբ հաստատել ուղեցին յուրյանց քարոզած կրոնին ճշմարտությունը»[4]։

Հարցի ուղիղ մեկնաբանությունը ըստ երևույթին անհրաժեշտություն է ծնում վերհիշել նաև Ե. Տեր-Մինասյանի՝ Եղիշեի ստեղծագործության ժանրային բնութագիրը ևս. «Բեև Եղիշեի երկը կրում է «Պատմություն» անունը,—գրել է նա,—և իբրև այդպիսին մեր ձեռագրերի պատմական ժողովածուներում դուրս է մղել Ղազար Փարպեցուն, բայց այն իսկապես ասած մի սովորական պատմություն չէ, այլ վկայաբանական գունավորում ստացած մի պատմական դյուցազներգություն...»[5]։ Իր «Բան խրատու յաղագս միանձնեաց» գրվածքում Եղիշեն անտարակույս նկատի է ունեցել հենց Վարդանանց պատերազմի անմահ հերոսներին, երբ գրել է. «Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի. և սուրբ քահանայք մեր խոզխոզեցան ի ձեռաց անօրինաց. գեղեցիկ երիտասարդքն գենան ի սպանումն, և բազում կուսանք վարեցան ի գերութիւն. դիրդ կանայք անկան ի տառապանս այրութեան, և բազում որբք կականին դառնապէս։ Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց և սուրբ քահանայք նորա կոփին շարշարին յանօրէն հարկահանաց։ (Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք. Վենետիկ, 1859, էջ 161)։

Պիտի ասել, որ դիտանկանի վերը նշած «վկայաբանական գունավորումը», հայ սրբախոսական գրականության այդ կարևոր շերտը, Եղիշեի ստեղծագործության մեջ այնքան է գորեղ ու ընդգծված, որ էական, անգամ որոշիչ նշանակություն ունի և իրավունք է տալիս Եղիշեին անվերապահ համարելու ազգային վկայաբանական ժանրի ձևավորողը հայոց հին գրության մեջ։

---

3 V դարից վերհիշենք նաև Փարպեցու փառաբանած հերոսին՝ Վահանին, որը երկրի հաղթական շանը նկատի ունենալով «երթեալ ի գուռն՝ տկարանալը ի հաւատն...» (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Տփղիս, 1904, էջ 116)։

4 Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և բնագրութիւնք Միքայել Փաշայի Փորթուգալ. Վենետիկ, 1903, էջ 16։

5 Ե. Տեր-Մինասյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ. Երևան, 1971, էջ 127 (ընդգծումը մերն է.—Վ. Ն.)։ Այս մասին տե՛ս նաև Մ. Ավդալբեգյանի «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար)» մենագրության (Երևան, 1971) «Եղիշեի պատմության հորինվածքի առանձնա՛տկությունները» հատվածը և այլուր։

ճշմարիտ է, իհարկե, որ մինչ այդ էլ հայ իրականությունը առանձին թարգմանությունների և որոշ ինքնուրույն գործերի միջոցով ծանոթ էր վկայաբանական ժանրի ստեղծագործություններին (հիշենք՝ Թադևոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը, Ագաթանգեղոսի Պատմությունից՝ Հռիփսիմյան կույսերի նահատակության պատմությունը, Գրիգոր Լուսավորչի վարքից նրա շարշարանքների գունեղ ու արտահայտիչ նկարագրությունները և այլն), բայց ազգային գրականության մեջ վկայաբանական ժանրի բուն ձևավորումը՝ իբրև սրբախոսական գրականության մի ավարտուն ու ինքնուրույն տեսակի՝ ժանրի կառուցվածքի իր որոշակի կանոններով, պատմագրական ու գեղագիտական սկզբունքներով, կապված է Վարդանանց պատերազմում ընկած հերոսների սխրանքն անմահացնող Եղիշեի անվան հետ։ Ավելին, երկար ու ձիգ հարյուրամյակների ընթացքում, սկսած հենց V դարից, Շուշանիկի վկայաբանությունից՝ ընդհուպ մինչև XVIII դարի վերջը, մինչև Սայաթ-Նովայի ողբերգական վախճանի ավանդախառն պատմությունը, ազգային սրբախոսական գրականության, մասնավորաբար վկայաբանական ժանրի ստեղծագործությունների վրա մշտապես առկա է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի ազդեցությունը՝ իր հայրենասիրական վիթխարի լիցքով ու հումանիստական խորքով, բովանդակության հարստությամբ, արտահայտչական միջոցների ու ձևերի բազմազանությամբ և այլն։ Կարելի է ասել, որ Եղիշեի ոսկեդենիկ մատյանից սկսած հայրենասիրության դաղափարը, այլադավանների դեմ մղված ազատագրական մաքառման խիստ որոշակի միտումը հայ սրբախոսական գրականության, ի մասնավորի՝ վկայաբանական ժանրի երկերի բնորոշ հատկանիշն է, նրա ազգային կարևոր առանձնահատկությունը[6]։

Վկայաբանական ժանրի ստեղծագործությանը բնորոշ մի շարք հատկանիշների կամ տարրերի հանդիպում ենք Եղիշեի Պատմության տարբեր դրվագներում՝ միահյուսված պատմական եղելությունների նկարագրություններին։ Սակայն ժանրի՝ դասական կանոններով գրված մի ավարտուն, ամբողջական ու բարձրարժեք քերթված է հեղինակի ստեղծագործության VII եղանակը՝ իր երկու ենթահատվածներով՝ ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ստեղծագործության Ե. Տեր-Մինասյանի աշխատասիրությամբ լույս տեսած գիտական հրատարակության, որի հիմքը, ինչպես հայտնի է, Անձևացյաց օրինակն է։ Երկի այս գլուխը ամբողջությամբ վերնագրված է՝ «Դարձեալ վասն նորին պատերազմին և շարշարանաց սուրբ քահանայիցն», իսկ նրա ենթահատվածները ունեն հետևյալ խորագրերը. «Դարձեալ վասն խոստովանող աշակերտաց նոցունց» և «Անուանք նախարարացն, որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի ետուն զանձինս ի կապանս արքունի»։ Երբ նկատի ենք ունենում ողջ եղանակին տրված ընդհանուր խորագիրը, թվում է, թե հեղինակը պիտի շարունակեր իր խոսքը «նորին պատերազմի» ռազմի եղելությունների մասին, բայց նա միանգամից անցնում է պարսից ձեռքով բանտարկված ու Ապար աշխարհի ավազակներն աքսորվածների ողբերգական վիճակի ու նրանց նահատակության նկարագրությանը՝ պարզելով իր որոշակի մտահղացումը, որով հավատի սուրբ ուխտին ամուր կանգնած կրոնավոր ու աշխարհիկ հերոսների հոգևոր կռիվը նա ընկալում ու մեկնաբանում է որպես նույն Ավարայրի հերոսամարտի բնականոն շարունակություն, սակայն այս անգամ հավատի, հայրենիքի ու ազատության համար հեռավոր երկրի անապատները քշված այրերը միայն մեկ, բայց չափազանց հզոր զենք ունեն՝ պատկառազդու հոգևոր զենքն է դա, որով նրանք բացառիկ ուժով ու տոկունությամբ դիմագրավում են այլադավան թշնամու անագորույն հալածանքներին ու իրենց գեղեցիկ, հերոսական կյանքի վախճանն են գտնում որպես վկա, խոստովանող, նահատակ։ Իր

[6] Այս մասին տե՛ս նաև՝ Ք. Տեր-Դավթյան. XI—XV դարերի հայ վարքագրությունը. Երևան, 1980, էջ 30—31։

անօրինակ սխրանքով վկան, նահատակը, խոստովանողը, լինի դա հոգևորական, թե աշխարհական, հումանիստ հեղինակի համար բարոյական նույն առաքինի մարդկային բարձր արժեքն է, ինչ ոազմի դաշտում հանուն հայրենիքի, ազատության ու սուրբ հավատի սրով ու վահանով մարտնչող, մահն արհամարհող, գիտակցված մահը անմահություն համարող հայ քաջորդին, զորավարն ու զորականը։ Երկու դեպքում էլ մեր առջև հառնում է հանուն մեծ նպատակի իր սխրանքով անմահացած, դեպի հավերժություն գնացող նահատակի, վկայի պայծառ կերպարը։ Այս հանգամանքը ասես ավելի պարզում է հեղինակի՝ իր երկի ընթացքում արտահայտած մի միտքը. իր ստեղծագործության նպատակը բնութագրելիս Եղիշեն ավելացնում է. «Եւ ահա ո՛ ոք կամեսցի՝ ընդունի իբրև դնահատակ առաքինի։ Եւ մանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն, և նա բազմադիմի շնորհս բաշխէ ամենեցուն. զոր և մեծ իսկ քան զամենայն՝ սէր սուրբ յաննենդ մտաց դիտեմք։ (Եղիշե, էջ 5)։

Եղիշեի մատյանի վկայաբանական ընդհանուր միտվածքի էությունն ըստ ամենայնի բացահայտելու համար ավելորդ չի լինի վերհիշել նրա երկի տարբեր մասերից որոշ հատվածներ, որոնք ընդելուզված են պատմական եղելությունների ընդհանուր շարադրանքին։ Նախ և առաջ վերհիշենք պարսից հաղարապետ Միհրներսեհի էդիկտին Արտաշատի ժողովի մերժողական կտրուկ պատասխանի մի բանի տողը, ուր լավագույնս արտահայտված է իրենց հավատն ու ազատությունը սեփական կյանքի գնով պաշտպանելու հայերի արտասովոր վճռականությունը. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ և են դառն հարուածք։

Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան. ըստ կամաց բոլոր արա զինչ և կամիս... Ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո՝ և պարանոցք մեր» (Եղիշե, էջ 40)։ Բյուզանդական Թեոդոս կայսերը հղած նամակում հայերը նույն հատու տոնով են հաստատում իրենց վճիռը. «Լինելեաք զման աստուածապաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ» (Եղիշե, էջ 72)։ Հապա որքան զորեղ շեշտ կա Ավարայրի նախօրյակին սպարապետ Վարդանի և Ղևոնդ երեցի՝ հայոց զորքին ուղղված զիմում-ճառերի մեջ։ «Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն,—ասում է հայոց զորքի սպարապետը,—և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զկորութիւն նոցա, զի բարձրասցի կողմ ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք» (Եղիշե, էջ 101—102)։ Որպես մի խրոխտ ու արտակարգ մարտակոչ են հնչում նույնպես Ղևոնդ երեցի խոսքերը. «Զայս գիտելով, եղբարք, մի՛ թուլութեամբ լքանիցիմք, այլ պրնդուրեամբ սուրիս և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք ի վերայ ոչնամանագն, որ յարուցեալ զան ի վերայ մեր։ Մեր յոյսն մեզ կրկին երևի, եթէ մեռանիմք՝ կեամք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան» (Եղիշե, էջ 109—110)։

Եվ այսպես, Եղիշեի երկասիրության մեջ փաստորեն զուգադրարար, կարելի է ասել դիրկրնդխառն հանդես են գալիս նահատակության դաղափարը՝ իր կրոնական հայտնի իմաստով, և այլադավան զորեղ թշնամու դեմ հանուն հավատի, հայրենիքի, ազատության կռվելու ոազմի բաջության կոչերը, զենքով անձնվիրաբար մարտնչելու և հաղթելու անթեքելի վճռականությունը։ Նույն վեհ նպատակին էին ծառայում երկու միջոցները ևս (երևի տեղին է կրկին վերհիշել պատմիչի խոսքերը՝ «...բազմադիմի է նահատակութեանդ անուն...»), հանդամանք, որն իր յուրահատուկ կնիքն է դրել ինչպես պատմական եղելությունները շարադրելու եղանակի, այնպես էլ նրանց մեկնարանության ու իմաստավորման վրա։

Հարկ է նկատի ունենալ նաև հետևյալ կարևոր հանգամանքը։ V դարի կեսերին, ազգային ազատագրական մեծ մաքառումի ամենածանր պահին, երբ օրհասական վտանգ էր սպառնում հայ ժողովրդին, երբ խաղաթղթի վրա էր դրված ազգի լինել-չլինելու ճակատագրական խնդիրը, բացառապես ամեն ինչ, անգամ դարի նշանավոր այրերի կրոնական համոզմունքները անմնացորդ ի սպաս են դրվում ազգի ինքնության պահպանման, նրա ազատության և անկախ գոյության գերխնդրին։ Ժամանակի առաջադեմ ու լայնախոհ մտածողները՝ հոգևոր դասից, առաջնորդվելով դարի գլխավոր հրամայականով՝ ազգի քաղաքական շահերով, առաջ են քաշում ու անգամ բավականին անսովոր կրքով պաշտպանում են սկզբունքներ, որոնք ոչ միայն չեն համընկնում կրոնական դոգմային, չեն համատեղվում նրա հետ, այլև որոշ իմաստով ըստ էության դեմ ընթաց են նրան։ Այս առումով չափազանց ուշագրավ է հայ ոսկեդարի խոշորագույն մտածողներից մեկի՝ աստվածաբան-փիլիսոփա Եզնիկ Կողբացու քննադատական վերաբերմունքը ֆատալիզմի նկատմամբ, որով նա ոչ միայն ժխտում է ճակատագրի մասին հին հեթանոսական պատկերացումները, այլև փաստորեն չի համակերպվում նաև «մի՛ կալ հակառակ չարին» հայտնի քրիստոնեական դոգմայի հետ (Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց. Թիֆլիս, 1914, էջ 112—113)։

Անշուշտ, դարի հայ իրականության, ազատագրական մեծ կռվի պահանջով է ծնվել նաև Եզնիկի կարևոր դիրքորոշումը, ըստ որի «որպէս մարտուսոյց ոք ամենայն հնարիւք հնարեալ զիւր աշակերտսն թեքել, առ ի ցուցանելոյ զհանգամանս մարտիցն, որով մարթիցեն յաղթել ախոյանից, և առաքիցէ զնոսա ի հրահանգս մրցել ընդ ախոյեանսն, և յաղթութեանցն ուշ առնել խրատիցէ, մինչև զկեանս անգամ արհամարհել. զի լաւ համարի թէ վասն անուան բարիոք մեռանիցին, քան թէ կենդանի կալցեն և վատանուն լինիցին» (նույն տեղում էջ 40)։

Միանգամայն ակնհայտ է ոսկեդարի երկու մեծ մտածողների ու ստեղծագործողների մոտեցման ու հայացքների ընդհանրությունը։ Հենց նույն զաղափարն է ընկած նաև ազգային ազատագրական կռիվը փառաբանող V դարի մեր դասական հեղինակների երկերի, մասնավորապես՝ Վարդանանց հերոսական սխրանքն անմահացնող Եղիշեի ստեղծագործության հիմքում։

Այլադավանի բռնակալության, նրա դաժան տիրակալության դեմ ազգի, ուրեմն և մարդու ազատության համար մղվող ճշմարտացի կռվի արդարացումն ու այդ կռվի գովերգումը մեր հին դասական հեղինակների հումանիստական գաղափարախոսության անկյունաքարային դրույթներից մեկն է, որ այնպիսի հետևողականությամբ ու այրող կրքով պաշտպանում են նրանք, մեկն իր փիլիսոփայական-հրապարակախոսական ուրույն հիմնավորումով, մյուսը՝ այդ արդարացի կռվի հերոսական իրողությունների փայլուն պատկերումով, խոսքի անկոկնելի արվեստի ուժով։

Եղիշեի երկի VII գլխին, նրա մատյանի այս ծավալուն հատվածին բնորոշ են առհասարակ վկայաբանական ժանրի դասական ստեղծագործություններին հատուկ բոլոր էական հատկանիշները։ Այն բնութագրվում է սյուժետային կառուցվածքի կուռությամբ ու նպատակասլացությամբ, ինչպես ողջ ազգի ճակատագրով, այնպես էլ մարդ-անհատի գոյի նկատմամբ մեծ մտահոգությամբ, մարդկային ճակատագրերի դրամատիկ վիճակներով, իրադրությունների արտակարգ լարվածությամբ և հուզական ներքին վիթխարի լիցքով, կոնֆլիկտների սրությամբ, տիտանական բնավորությամբ նահատակների զորեղ կերպարներով, ամայի վայրերում կամ թշնամու գնդանում նրանց կրած տառապանքների սարսափազդու պատկերներով, հրաշքների ու տեսիլքների գունեղ նկարագրություններով, ճոխ ու հարուստ լեզվով, ճարտասանական փայլուն արվեստով, շարադրանքին արտակարգ դինամիզմ հաղորդող աշխույժ երկխոսություններով և այլն։ Միով բանիվ, իր տեսակի մեջ դա մի բարձրարժեք, ավարտուն ու ամբողջական գեղարվեստական պատում է

օժտված կրոնաբարոյախոսական հարուստ բովանդակությամբ ամբողջովին ներծծված քրիստոնեական հումանիզմի գաղափարներով, բոցաշունչ հայրենասիրությամբ։ Հենց այս բարձրարժեք ստեղծագործությամբ կատարյալ ձևավորում ստացավ ինքնուրույն վկայաբանության ժանրը ազգային դպրության մեջ։ Նաև ա՛յս կարևոր հանգամանքով է որոշվում Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ստեղծագործության տեղն ու նշանակությունը հայոց հին գրականության պատմության մեջ։

Քանի որ վերը խոսք եղավ ազգի ու մարդ-անհատի ճակատագրի առթիվ Եղիշեի մտահոգության մասին, ապա հեղինակի քրիստոնեական հումանիզմի, պատմության փիլիսոփայության բնութագրման առումով չափազանց ուշագրավ է նրա առաջ քաշած մի դրույթը, որը պարզորոշ ցույց է տալիս, որ այդ մտահոգությունը չի սահմանափակվում սոսկ ազգային շրջանակներով, այլ կարելի է ասել, յուրատեսակ համամարդկային հնչեղություն է ստանում։ Այս առումով շատ արժեքավոր է Եղիշեի հետևյալ միտքը, որը, կարծում ենք, մեկնաբանության կարիք չունի. «Արդ յայսմ հետէ և անդր,— դրել է հեղինակը,— ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն ի ներքս, ընդ քակել միաբանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ. և անձնընտրիք լինելով՝ յոյժ բազմանայ յայումն ողբոյս։ Քանզի հատեալ անկեալ անդամքն, որ յառաջագոյն սորուն սուրբ մարմնոյս էին, դառնայ մարդ յաբտասուս առաջի մերձակայ դիականն. եւս առաւել լնու դառնութեամբ ի վերայ այնորիկ, որ յոգի և ի մարմին առ հասարակ դիականանայ։ Եւ երէ ի վերայ միոյ անձին այսպէս, ո՞րչափ ևս առաւել ի վերայ ողջոյն ազգի միոջ։ Այլ յայսմ տեղւոջ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումն մեր. այլ ի վերայ ազգազ և աշխարհաց...» (Եղիշե, էջ 89—90)։

Միանգամայն օրինաչափ է, որ սրբախոսական ժանրերի մարդում ևս, ինչպես այլուր, դրսևորվել է հայոց հին գրականության սկզբնավորման փուլի մի կարևոր յուրահատկություն, երբ թարգմանություններին ու նրանց տեղայնացմանը զուգընթաց ծնվում են այդ ժանրերի առաջին ինքնուրույն ստեղծագործությունները, որոնք դառնում են բուն ազգային կյանքի կարևոր միտումների արտահայտիչները և որոնք կրոնաբարոյախոսական նպատակից բացի, ժամանակին բավարարություն են տվել միջնադարյան մարդու գեղագիտական պահանջմունքներին ու նպաստել են նրա գեղարվեստական ճաշակի մշակմանը։

Ազգային գրականության զարգացման ընդհանուր պրոցեսը անհրաժեշտաբար ենթադրում էր ժամանակի տարբեր գրական ժանրերի ու տեսակների փոխազդեցություններ։ Առանձնապես արդյունավոր են եղել պատմագրության-պատմական արձակի և սրբախոսական ժանրերի՝ վարքերի ու վկայաբանությունների փոխադարձ կապվածությունն ու փոխազդեցությունները (որի փայլուն օրինակն է Եղիշեի գրական ժառանգությունը), առանց որի անհնար է պատկերացնել առհասարակ հին հայ դպրության վերընթաց ու արդյունավոր շարժումը։

Անհասարակ հայտնի է, որ սրբախոսական գրականության երկերում, մասնավորապես վկայաբանական ժանրի ստեղծագործություններում, քրիստոնեության գաղափարները հիմնականում մատուցվում են, կարելի է ասել, ավելի շոշափելի, առարկայական ձևով՝ հիմնականում կոնկրետ գործողությունների նկարագրությամբ, կերպարների միջոցով, թեև նրանց մեջ էլ հաճախ բավական ընդարձակ տեղ են գրավում ջատագովական բնույթի ճառերը, աստվածաշնչային հղումները, աղոթքները, սաղմոսները և այլն, որ ժամանակի գրական էտիկայի առումով միանգամայն օրինաչափ էր։

Նկատի պետք է ունենալ, որ վարքերն ու վկայաբանությունները մեծ մասամբ հյուսվել են պատմությունից հայտնի դեպքերի և անձանց շուրջ, որոնց կյանքի ու գործունեության պատմությունը, նրանց հասարակական ու մարդկային ողջ կեցվածքը լավագույնս ներդաշնակում էր քրիստոնեության բարոյական իդեային։ Ահա թե ինչու սրբախոսական ժանրերի ստեղծագոր-

ծությունների՝ ինչպես վարքերի, այնպես էլ վկայաբանությունների համար առաջնահերթ կարևորություն է ունեցել ընդօրինակման արժանի իդեալական կերպարների կերտումը։ Այս հանգամանքն էլ պայմանավորել է այդ ստեղծագործություններում կերպարի կերտման գեղագիտական ուրույն սկզբունքը՝ իդեալականի գեղարվեստական կերպավորումը պատմականորեն իրականի ու կոնկրետի մեջ և նրա միջոցով։ Այստեղից էլ՝ միանգամայն պարզ է այն բացառիկ ուշադրությունը, որ սրբախոսական գրականության հեղինակները նվիրում են կերպարների կերտման արվեստին։

Իդեալականացման միջոցով քրիստոնյայի կատարելատիպերի ստեղծումը առհասարակ բնորոշ է սրբախոսական գրականությանը, ինչպես վարքագրական, այնպես էլ վկայաբանական ստեղծագործություններին։ Այս առթիվ արժեքավոր են նշանավոր միջնադարագետ, ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչյովի դիտարկումները։ «Միջին դարերում,—գրել է նա,—իդեալականացումը եղել է գեղարվեստական ընդհանրացման միջոցներից մեկը։ Գրողը իր ստեղծած մարդու (պետական կամ եկեղեցական գործչի, սրբի) կերպարի մեջ դրել է իր պատկերացումները այն մասին, թե ինչպիսին պիտի լինի այդ մարդը և ինչպիսին լինելու մասին իր պատկերացումները նույնացրել է գոյի հետ»[7]։ Գիտնականի կարծիքով «միջնադարյան պատմականությունը պահանջում է իդեալականացում (այս բառի լայն իմաստով) և հենց այդ իդեալականացման մեջ է արտահայտվում միջնադարյան գեղարվեստական ընդհանրացումը»[8]։

Միանգամայն բնական ու անտարակուսելի է պատմականորեն հավաստի ընդօրինակման արժանի իդեալական կերպարների ստեղծման անհրաժեշտությունը այնպիսի մի ստեղծագործության համար, որպիսին էր Եղիշեի՝ վկայաբանական շատ ուժեղ գույնով խրատաբարոյախոսական երկը, որն իր իսկ հեղինակի խոսքով ասած, գրվել էր որպես հույս՝ հուսացողների համար, մխիթարություն՝ սիրելիների համար և քաջալերություն՝ քաջերի համար։ Եվ պիտի ասել, որ իր նպատակին հասնելու համար Եղիշեին հաջողվել է մեծ վարպետությամբ կերտել Վարդանանց ու Ղևոնդյանց անմոռաց կերպարները, որոնցից ամեն մեկը մի շեշտված անհատականություն է և որոնց կենսական անհրաժեշտությունը զգացել են ոչ միայն հեղինակի ժամանակակիցները, այլև հետագա դարերի բազմաթիվ հայկազուն սերունդներ։

Եղիշեի վկայաբանական ստեղծագործության (VII եղանակ), ավելին՝ նրա ողջ մատյանի ամենացայտուն ու գեղարվեստորեն ամբողջացված (դարձյալ իր ժամանակի գեղագիտական ըմբռնումների չափանիշներով), յուրատեսակ քարակոփ արձան հիշեցնող կերպարներից է Ղևոնդ երեցը (Եղիշեի երկում նա երբեմն անվանվում է նաև եպիսկոպոս), որը Վարդանի հետ միասին հեղինակի ամենասիրած գաղափարատիպերից է՝ իր համոզմունքների անօրինակ կայունությամբ ու իրական կյանքում դրանց պաշտպանելու շտեսնված հաստատակամությամբ, մահվան նկատմամբ տածած արհամարհանքով, հավատին ու հայրենիքի ազատությանը ֆանատիկորեն նվիրվածությամբ, հոգեկան վիթխարի ներքին զորությամբ, անձնական խիզախությամբ (հիշենք Անգղի դեպքերը, որտեղից սկիզբ է առնում այս փայլուն կերպարը), իր սարսափազդու վախճանով և այլն։ Այս կերպարում հեղինակը խտացված ձևով ու մեծ վարպետությամբ դրել է իր փայփայած գաղափարները, իր ողջ հավատամքը, կրոնարարոյական իր ամենաբարձր ըմբռնումները։

Հիրավի, տիտանական կերտվածքով իր էությամբ մի անկրկնելի, ուժեղ անհատականություն է Ղևոնդը ոչ միայն Եղիշեի ստեղծագործության, այլև ողջ հայոց հին և միջին դարերի դպրության պատմության մեջ և միանգամայն հասկանալի է, թե ինչու Վարդանանց պատերազմի մի ամբողջ շարք նահատակների «Ղևոնդյանք» անունն է ընծայվել, որոնց սխրանքի փառա-

---

[7] Д. С. Лихачев. Человек в литературе Древней Руси. М.—Л., 1958, с. 115:

[8] Նույն տեղում, էջ 121։

բանությանն անդրադարձել են նաև հետագա դարերի շատ քերթողներ՝ նրանց ու նրանց առաջնորդին նվիրելով բազմաթիվ գեղեցիկ ներբողյաններ, շարականներ։ Մաշտոցյան դարի հոգևոր դասի իսկական խորհրդանիշն է Ղևոնդը և այդպիսին էլ նրա կերպարը տիրականորեն մնաց սերունդների հիշողության մեջ։ Անդամ իր եղերական մահով Ղևոնդ երեցը սարսափ է տարածում թշնամիների վրա (տե՛ս Եղիշե, էջ 177)։

Ղևոնդ երեցի պատուհասումին նախորդում է նրա հարդաքննությունը պարսիկ պաշտոնյա Դենշապուհից, ուր նա հավատացյալի անսասան կամքով ու անօրինակ համոզվածությամբ մարդկային մեծ արժանապատվությամբ մերժում է իրեն և իր ընկերակիցներին պարտադրվող մազդեական կրոնը (տե՛ս Եղիշե, էջ 173—174)։

Հայտնի է, որ վկայի հարցաքննությունը այլադավան տիրակալի կամ նրա բարձրագիրք պաշտոնյայի կողմից առհասարակ վկայաբանական ժանրի ստեղծագործության անհրաժեշտ տարրերից է։ Նման հարցաքննությունները, որոնք հաճախ թատերական գործողություն հիշեցնող երկխոսություններ են, ոչ միայն նպաստում են վկայի հոգևկան ներաշխարհի բացահայտմանը, նրա կերպարի վերակենդանացմանն ու ամբողջացմանը, այլև մարդկային ճակատագրերի դրամատիկ բախումների շուրջ ծավալված կոնֆլիկտների սրմանը, իրականության կենսական ճշմարտության ինչ-ինչ կողմերի բացահայտմանը։ Դրանք, այդ հարցաքննություն-երկխոսությունները միաժամանակ նշանակալի չափով աշխուժություն, դինամիզմ են հաղորդում երկի շարահյուսվածքին։

Եղիշեն թանձրացած պատկերներով ընթերցողի մոտ երկմտանք չի թողնում, որ հոգևկան ներքին վիթխարի ուժն է այն կենսատու ակունքը, որից անգամ մարմնով վտիտ ու առողջությամբ տկար վկան ստանում է բացառիկ ուժ ու ֆիզիկական կարողություն, որով նա դիմանում է անլուր տանջանքներին ու հաղթող դուրս գալիս իր անձն ու հոգին խոշտանգող այլադավանի նկատմամբ։ Սա ևս, որ առհասարակ շատ տարածված է վկայաբանական ժանրի ստեղծագործության մեջ, նպաստում է վկայի իդեալական կերպարի կերտելուն, քրիստոնեական իդեալի հաստատմանը։

Եղիշեի ստեղծագործությանը մի առանձին դրավչություն և հետաքրքրաշարժ բնույթ են հաղորդում նրանում հանդիպող հրաշքների ու տեսիլքների դյուցազն նկարագրությունները, որոնք ևս, ինչպես հայտնի է, սրբախոսական ժանրերի ստեղծագործությունների կառուցվածքի անկապտելի տարրերն են հանդիսանում։ Վարքի հերոսը կամ վկան ամենաֆանտաստիկ հրաշքներ է գործում ոչ միայն իր կենդանության օրոք, այլև հետմահու (այս դեպքում հրաշագործ զորությունը փոխանցվում է սրբի անկյանը մարմնին, նրա մասուներներին ու գերեզմանին)։ «Ընդարձակ, ճիշտ կազմված վարքը (պետք է ավելացնել՝ և վկայաբանությունը—Վ. Ն.),—գրել է Վ. Կ. Կլյուչևսկին,—առանց հետմահու հրաշքների իսկապես հազվագյուտ բացառություն է»[9]։ Ավելորդ է ապացուցել, որ իսկապես առանց այդ հրաշքների ու տեսիլքների հագիվ թե հնարավոր լիներ կենդանի օրինակով հաստատել քրիստոնեական կրոնի զորությունը, այլ կրոնների նկատմամբ նրա անվերապահ գերազանցությունը, ինչպես նաև՝ պատկերացնել վկայի կամ սրբի անձի վեհացումը։ Առհասարակ պետք է նշել սրբախոսական հուշարձաններում հրաշքների ու տեսիլքների՝ նկարագրվող անցքերին միահյուսումի ու մատուցման դեղագիտական սկզբունքը, որով այդ հուշարձանների հեղինակները պիտի հասնեին պատմվածքի հավաստիության պատրանքի ստեղծմանը, առանց որի դժվար կլիներ ապահովել նկարագրած եղելությունների առարկայական կոնկրետությունը։ Սովորաբար այդ հրաշքներն ու տեսիլքները վերագրվում են ոչ թե երևակայածին մարդկանց, այլ պատմությունից հայտնի, ավելի

[9] В. К. Ключевский. Древнерусские жития святых как исторический источник. М., 1871, с. 417.

հաճախ՝ նշանավոր անձի, ապա մատնանիշ է արվում հրաշքի կատարման կամ վկայի նահատակության կոնկրետ վայրը, ժամանակը (տարին, ամիսը, օրը, երբեմն՝ նույնիսկ ժամը), հիշատակվում են հրաշքի ականատեսները, որոնցից մեկը երբեմն ինքը՝ հեղինակն է կամ այն անձը, որից նա լսել է կատարված հրաշքի մասին։ Ահա շնորհիվ այս հանգամանքների, հնարածոն միջնադարյան մարդուն պիտի ներկայանար որպես իրականում տեղի ունեցած եղելություն՝ ներազդելու նոր ուժ ու կարողություն հաղորդելով ողջ ստեղծագործությանը։ Վերը նշված յուրատեսակ կանոններից որոշ շեղումներով մենք հրաշքների ու տեսիլքների հետաքրքրաշարժ ու կառուցիկ նկարագրությունների ենք հանդիպում Եղիշեի ստեղծագործության մեջ, որոնք յուրատեսակ գույն ու գրավչություն են հաղորդում նրա վկայաբանական քերթվածին։ Ահա, օրինակ, բանտում «սուրբ քահանաների» սրածումից հետո Եղիշեն պատմում է հետևյալ ահազդու հրաշքը. «Եւ իբրև աւուրք երեք անցին ի վերայ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ ամենեցուն, և իբրև թմբրեալք և կիսամեռք անյարիրք անկեալ դնէին, զերիս աւուրսն։ Իսկ ի չորրորդում աւուրն երկուք ի պահապանացն չարաչար լլկեցան ի դիւէ։ Դարձեալ հասարակ գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք հնչէին, և թնդիւնք որոտաձայնք ի ներքուստ՝ որպէս զդղրդումն գետնաշարժի. երկիրն դողայր ի ներքոյ նոցա, և շողիւնք սուսերաց փայլատակունս արձակէին շուրջ զնոքօք։ Եւ զամենեսեան զդիակունսն կանգնեալ տեսանէին, և զնոյն բանս ատենին ահագինս բարբառէին ի լսելիս նոցա. մինչև խուճապել նոցա ընդ միմեանս, դեռ ևս զիրեարս սատակէին։ Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք, մինչև այր գրնկերի փախուստ չգիտէր ընդ որ երթայր։ Եւ եկեալ պատմէին մեծաւ զարմացմամբ զամենայն անցս չարչարանացն, զոր կրեցին» (Եղիշե, էջ 180)։

Այնքան ուժեղ ու ազդեցիկ է հավատին զինվորագրված «սուրբ քահանաների» պահվածքի ներազդելու կարողությունը, որ, ինչպես պատմվում է Եղիշեի երկում, ականատես լինելով քրիստոնեական կրոնի հրաշագործ ուժի դրսևորումներին, նրանց հալածիչն ինքն է թողնում իր կրոնը և դավանափոխ լինում, հանգամանք, որ առհասարակ մի արտակարգ էպիզոդ չէ վկայաբանական ստեղծագործության համար։

Եղիշեն իր քերթվածում հրաշալի օգտագործել է դարձյալ սրբախոսական հուշարձաններում հաճախ հանդիպող այնպիսի մի արդյունաշատ արտահայտչական միջոց, ինչպիսին է այլադավան հակառակորդների շուրթերով քրիստոնեական հավատի գովերգումն ու այդ հավատի մարդկանց հաստատակամ պահվածքի ջատագովումը (տես Եղիշե, էջ 157, 180)։

Ամփոփելով մեր խոսքն ասենք, որ վկայաբանական ստեղծագործությանը բնորոշ վերը հիշված արտահայտչամիջոցների վարպետ օգտագործումով Եղիշեն հասել է իր հետամտած նպատակին՝ հաստատելով քրիստոնեական կրոնի գերազանցությունը պարսից հավատի՝ մազդեիզմի նկատմամբ, միաժամանակ կերտելով իրենց կրոնին բացառիկ նվիրված նահատակների կենդանի, ուժեղ ու անմոռաց կերպարներ։

Եղիշեն իր ստեղծագործության մեջ հետևողականորեն այն դաղափարն է քարոզում, որ նահատակների հոգեկան (և ոչ միայն) անսպառ հզորության գլխավոր ակունքը ուսումն է, կրթությունը, լուսավորությունը կամ, ինչպես ասվում է երբեմն՝ հոգևոր հայրենիքը։ Սա էր մաշտոցյան դարի հայ կյանքի մեծ խորհուրդը, հավատի ու հայրենիքի անկախության համար մղվող ծանր կռվի գլխավոր հրամայականը։ Առանց հոգևոր զորության ու պատշաճ մտավոր կարողության չկա՛ և չի՛ կարող լինել «կատարյալ կյանք», այլադավան զորեղ թշնամու դեմ հաղթանակի որևէ հույս ու գրավական։ Հենց այս ամուր հիմքի վրա է կառուցում հեղինակը նահատակության դաղափարի իր տեսությունը։ Այս առիթով հարկ կա վերստին վերհիշելու «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի հայտնի տեղը. «Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ դիտէ, երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»։

Այս խոսքերից անմիջապես հետո պատմիչն ավելացնում է. «Եւ այս ամենայն շարիմ մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որպէս մեծ է ոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է անսաւորութիւն մտաց քան զմարմնոց» (Եղիշե, էջ 14)։

Միանգամայն պարզ է, որ ինչպես ողջ հայ մատենագրությունը, այդ թվում և ազգային սրբախոսական գրականությունը, չէր կարող զարգանալ ներփակ կյանքով, նա պարտադրաբար իր վրա պիտի կրեր ազգային կենդանի իրականության գործուն ազդեցությունը։ Հայտնի է, որ եթե այլ ազգերի ու պետությունների կյանքում դպրության և առհասարակ հոգևոր մշակույթի վերելքը կապված է եղել արշավանքների, ռազմաքաղաքական նվաճումների հետ (ինչպես, ասենք, Ռուսիայի), ապա հայ մատենագրության (այդ թվում և սրբախոսական գրականության) բարգավաճման հիմնական հոգն ու սնուցիչ ավիշը եղել է ազատագրական մաքառումը, որի գաղափարախոսության մշակմանն էին կոչված մեր հին դասական հեղինակների տարբեր ժանրերի ստեղծագործությունները։ Դրա փայլուն ապացույցն է հենց ոսկեդարի բազմաժանր հարուստ գրականությունը՝ մեր հնագույն մշակույթի ամենարարձր արտահայտությունը։ Պատահական չէ, որ Եղիշեն հարկ է համարել հատուկ ընդգծել, թե որպիսի անօրինակ խորությամբ են ընկալել ազգային հոգևոր մշակույթի արժեքները հավատի ու հայրենիքի ազատության և անկախության համար իրենց կյանքը անմնացորդ նվիրաբերելու պատրաստ հայ քաջորդիները։ Այս կապակցությամբ չափազանց հուզիչ ու պերճախոս է Եղիշեի ստեղծագործության այն հատվածը, ուր պատմվում է, թե ինչպես Ավարայրից հետո Ապար աշխարհի անապատներն աքսորված նախարարները, «որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի եառն զանձինս ի կապանս արքունիս, իրենց կյանքի այդ դժնի պահին անգամ չեն մոռանում հոգալ հոգևոր մշակույթի՝ ազգային գրի ու դպրության ուսուցման անհրաժեշտության մասին։ Լսենք պատմիչին. «Իսկ յերանելեացն բազումք ի նոցանէ, որ մանկագոյնքն էին, ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, և եղեւ նոցա այն կերակուր հոգեւոր, որով զանձինս բաւալերէին և զրնկերսն միխթարէին։ Եւ այնպէս զմայլեցան ի միտս և յոգիս իւրեանց, զի և որ ծերագոյնքն էին ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան։ Զի թէպէտ և դպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում սաղմոսս ի բերան առեալ՝ հոգեւոր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկուցն» (Եղիշե, էջ 195—196)։ Վկայաբանական երկի այս պատկերն, իրոք, բացառիկ է ու սրտառուչ, և միաժամանակ խորհրդանշական ոչ միայն իր ժամանակի համար, այլև դրի ու դրքի պաշտամունքը դարեր ու դարեր իր ոգում որպես մի անեղծ սրբություն կրող հայ ժողովրդի պատմության առումով։ Ավելորդ չենք համարում նշել նաև, որ հապիվ թե այն իր նմանօրինակն ունենա համաշխարհային սրբախոսական (և ոչ միայն) գրականության մեջ։

Որքան էլ, պատմագրելով ողբերգական իրադարձությունները, Եղիշեն ցավում, ավաղում է տեղի ունեցածի առթիվ, այնուամենայնիվ խիստ կարևոր է այն հանգամանքը, որ նա ողբասաց չի դառնում, չի վհատվում, բնավ չի կորցնում հույսը դալիքի նկատմամբ։ Կարելի է ասել, որ արցունքով ու արյունով ողողված նրա նկարագրությունների վրա մշտապես մի տեսակ ասես թեածում է խորքով հատկանշվող, արտաքնապես գուցե և այնքան էլ հատու չնշմարվող լավատեսական ոգին, պատմական հեռանկարի հաստատման յուրատեսակ օպտիմիստական գաղափարը։ Չնայած հայերի կրած անդառնալի կորուստներին, հեղինակի համար այնքան թանկ ու երևելի այրերի՝ քաջ հայկազունների՝ Վարդանի ու Վարդանանց կործանմանը, խնկելի Ղևոնդ երեցի ու Ղևոնդյանց նահատակությանը, Եղիշեն մի արտասովոր ներքին մղումով խորապես հավատում է Բարու և Ճշմարտի վերջնական հաղթանակին։ Հիրավի, գեղեցիկ է ասել Եղիշեի ստեղծագործության լավագույն

գնահատողներից մեկը՝ Յու. Վեսելովսկին. «Եղիշեի ազնվաբարո ձայնը հասել է մինչև մեր ժամանակները..., բարբարոսության, լմացումի, տառապանքների երկար դարերի միջով։ Այդպես մութ, թավախիտ անտառների մեջ կորած միայնակ վանքից երեկոյան ժամերին երբեմն հասնում է զանգի մելոդիկ դողանջը... Եվ տա Աստված, որ առօրյա կյանքի փոթորիկների ու ձախորդությունների մեջ մեզանից ամեն մեկը կարողանա պահպանել այդքան հավատ Ճշմարտության ու Բարու նկատմամբ, այդպիսի ազնիվ իդեալիզմ ու կարեկցանք մերձավորների տառապանքների նկատմամբ»[10]։

Եղիշեի վկայաբանական ստեղծագործության արժեքավորման առումով չափազանց ուշագրավ է նրա ավարտը, որ միաժամանակ փաստորեն հեղինակի ողջ ստեղծագործության՝ «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ողբերգական հերոսապատումի վերջաբանն է։ Մի կողմից սա թերևս Եղիշեի երկի կառուցվածքին վերաբերող խնդիր է, սակայն առավել էականը երկի այդ ավարտական հատվածի հումանիստական ոգին, բովանդակությունն ու ներքին խորհուրդն է, որով այն մեծ կարևորություն է ունեցել հետագա դարերի ազգային դպրության վրա խոր հետք թողած ոսկեդարյան պատմագրական նշանավոր հուշարձանի բուն էությունը և գաղափարական միտվածքն ըստ ամենայնի բնութագրելու առումով։

Այստեղ տեղին է հիշել Եղիշեի պոետիկայի մի կարևոր յուրահատկությունը։ Նրա ստեղծագործությանը, հարկավ, առավել բնորոշ է էքսպրեսիվ ոճը, որը պայմանավորված է, անշուշտ, պատմագրելու նյութի բնույթով։ Սակայն դրա հետ մեկտեղ նրա ոճին հատկանշական է նաև նուրբ քնարականությունը։ Պետք է առհասարակ նկատել, որ գեղարվեստական այս երկու տարբեր ոճերի ներդաշնակ զուգակցումը վիթխարի հուզական լիցք, ներազդելու անկրկնելի զորություն է հաղորդում Եղիշեի ստեղծագործությանը։ Հեղինակի քնարական ոճը իր փայլուն արտահայտությունն է գտել մասնավորապես նրա մատյանի ավարտական հատվածում, ուր քերթողը մեծ հուզականությամբ ու բացառիկ բանաստեղծական ներշնչանքով պատմում է պատերազմում ընկած կամ օտար ափեր աքսորված հայոց ավագանու տիկնանց ծանր կացության մասին, որոնք չտեսնված արիությամբ ու տոկունությամբ տանում են իրենց ողբերգական վիճակի ողջ ծանրությունը։ Մ. Աբեղյանի բնորոշումով դա «գորովալից քնքշությամբ ոգված մի սքանչելի հիմն է առաքինի կանանց, «փափկասուն տիկինների» մասին», «որի նմաններն իր ժամանակի համաշխարհային գրականության մեջ անգամ քիչ կան»[11]։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Հայոց աշխարհի «փափկասուն տիկնանց» ներբողը այնքան էլ սերտ չի կապակցված Եղիշեի վկայարանական ստեղծագործության ընդհանուր հենքին։ Բայց դա սոսկ երևութական է։ Իր մեջ խորը անթեղված յուրօրինակ լավատեսական ոգով, փրկության անմար հույսով ու հավատով ներթափանցված այս շարահյուսվածքը սրբախոսական քերթվածի հրաշալի տրամաբանական ավարտն է և, միաժամանակ, ամբողջությամբ վերցրած Վարդանանց մեծ կռվի պատմության փառահեղ վերջաբանը։ Եղիշեի երկի այդ հատվածը ևս պատմում է մարդկային ոգու բացառիկ անընկճելիության, Հայոց աշխարհի կանանց բարձր առաքինությունների մասին, նրա գլխավոր միտումը ևս ազատագրական մեծ մաքառումի փառաբանությունն է՝ մեկ այլ հայեցակետով, որի հիմքը դարձյալ

---

10 Литературный деятель героической эпохи Егише варданет. Տե՛ս Ю. А. Веселовский. Очерки армянской литературы, истории и культуры. Вступительная статья, составление, редакция и примечания Аллы Давтян. Ереван, 1972, с. 123.

11 Մ. Աբեղյան. Երկեր. հ. 9, էջ 343, 342։ Ավելորդ չենք համարում հիշել նաև, որ Յու. Վեսելովսկին Եղիշեի երկի այդ կտորը համեմատել է ռուս կանանց անձնազոհությունը անմահացնող Ն. Նեկրասովի հայտնի բանաստեղծության հետ։ Տե՛ս Ю. А. Веселовский. Указ. соч., с. 118.

մայր ժողովրդի բարոյահոգեբանական կարողությունների ու մարտական ոգու նկատմամբ հեղինակի մեծ հավատն է, ժողովրդի անմահության գաղափարը, համբերությամբ տոկալով ու մաքառելով ապրելու, գոյատևելու անհողդողդ կամքը, որի առջև անզոր է ամեն մի բռնի ուժ, ամեն մի դժնի հալածանք։ Երկի այդ հատվածը ինքնին ժողովրդի կենսափիլիսոփայությամբ ողջովին շնչող մի փայլուն խորհրդանշական քերթված է, ոսկեդարի պատմագրական նշանավոր հուշարձանին լավագույնս պատշաճող մի փայլուն ու առինքնող վերջերդ, քրիստոնեական հումանիզմի գաղափարով ողջովին ներթափանցված, մարդկային բարձր առաքինությունները վեհացնող ստեղծագործություն, որով ավարտվում է այլազգական պարսից բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական մեծ մաքառման պատմությունը։ Արվեստի տեսակետից ևս Եղիշեի երկի այդ կտորը հայոց հին գեղեցիկ գրականության լավագույն արդասիքներից է, որի մասին մեծ հիացմունքով են խոսել հայ և օտարազգի գեղագետները[12]։ Երկի ավարտական մասում արվեստի չխամրող դույներով փառաբանվում է անհամար զրկանքներ մեծ համբերությամբ ու հերոսաբար տարած «հայոց աշխարհի» «փափկասուն տիկնանց» հոգեկան վիթխարի ուժն ու բացառիկ կամքը։ Եղիշեի մատյանի այդ կտորը մի փառահեղ օրհներդ է մարդկային դոյի վեհության, նրա մեծագույն առաքինությունների։ Հեղինակը հայոց աշխարհի կանանց վիճակի ողջ ողբերգականությունն ընդգծելու համար հիշում է կյանքի ու երջանկության ավետաբերի՝ դարեան պատկերը. «Բազում ամերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Սաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զյանկալի դեղ երեսաց նոցա... Ոչ ես սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ ե՞րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն» (Եղիշե, էջ 201—203)։

Կարդալով հայոց աշխարհի տիկնանցը նվիրված անզուգական դավերգը ընթերցողը ակամա մտածում է (և, հավանաբար միշտ էլ մտածել է), որ եթե ազգի բարձր դասին պատկանող «փափկասուն տիկնայք» են տիրում բարոյահոգեբանական այդպիսի վիթխարի զորության, անասելի զրկանքները հերոսաբար տանելու ու հաղթահարելու այդպիսի բացառիկ կամքով, հապա որքան զորեղ պետք է լինեն բարոյական այդ վեհ հատկանիշները ու մարդկային առաքինությունները բուն իսկ ժողովրդի ընդերքում, «հողի մարդկանց» մեջ, որոնցով է միայն կանգուն ու հավերժական ամեն մի ազգ, ամեն մի երկիր։

Ա՛յս է, ահա, հայոց հին դպրության մեջ վկայաբանական ինքնուրույն ժանրը ձևավորող Եղիշեի փայլուն ստեղծագործության և, ամբողջությամբ վերցրած, նրա «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ոսկեդենիկ մատյանի մեծ խորհուրդը, նրա վիթխարի հմայքի դաղտնիքը, որով դարեր շարունակ ոգեշնչվել, նոր սխրանքների են կոչվել հայկազուն բազում սերունդներ, ողջ մի ժողովուրդ։ Հայ սրբախոսական գրականության զարգացման վրա թերևս ոչ մի երկ չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, որքան ոսկեծղիկն Եղիշեի անզուգական ստեղծագործությունը։

---

12 Տե՛ս, օրինակ, գրականագետ Գ. Թաթոսյանի «Из архива Валерия Брюсова» հրապարակումը.—ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1959, № 5, էջ 89—90։

ЕГИШЕ И ФОРМИРОВАНИЕ МАРТИРОЛОГИЧЕСКОГО ЖАНРА В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Академик НАН РА В. С. НАЛБАНДЯН

Резюме

В древней и средневековой армянской литературе, как и в литературах других христианских народов, значительное место занимала агиография (жития и мартирологии), цель которой заключалась в возвышении христианской религии, в распространении ее нравственных идей и идеалов, в воспитании народа в духе христианского гуманизма. Это последнее обстоятельство имело огромное значение для судеб находящегося под иноземным игом народа, для его нравственного очищения и создания его высокого морального духа и облика. Хотя в V в. в Армении уже были знакомы с отдельными оригинальными и переводными произведениями мартирологического жанра (мартирологии Апостола Фаддея, Дев Рипсимеан и др.), собственно формирование жанра связано с именем классика армянской литературы V в. Егише. В статье подвергается обстоятельному анализу VII глава его сочинения «О Вардане и войне Армянской», которая является завершенным и целостным творением, созданным по всем канонам мартирологического жанра. Особое внимание в статье уделяется исследованию поэтики этого уникального произведения, оставившего глубокий след в истории национальной литературы.